IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: *Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:*

Մասնաճյուղն իր ռազմավարությամբ և գործողություններով (ՌԾ 2016-2020, նպատակ 9) նպատակ ունի նպաստել բուհի միջազգայնացմանը, զարգացնել նրա համագործակցությունը հայաստանյան և արտասահմանյան հեղինակավոր բուհերի հետ, մասնակից դառնալ ուսումնական գործընթացում նրանց լավագույն փորձի փոխանակման ծրագրերին, պայմաններ ստեղծել դասախոսների և ուսանողների փոխանակման համար:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

Հանդիսանալով Մայր բուհի միակ մասնաճյուղը՝ կրթօջախն առայժմ օգտվում է փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող ԵՊՀ-ի կանոնակարգերից և ընթացակարգերից: Կարևորելով այդ գործընթացները և համագործակցությունը արտաքին գործընկերների հետ 2019թ.–ի փետրվարին մասնաճյուղում ստեղծվել է Արտաքին կապերի բաժինը (ԱԿԲ) (2017թ.-ին ստեղծված միջազգային կապերի բաժնի փոխարեն):

Փորձի փոխանակմանը, համագործակցական միջավայրի զարգացմանը և միջազգայնացմանն ուղղված մասնաճյուղի քաղաքականությունն ու գործունեությունը հիմնված են ԵՊՀ ԻՄ կանոնադրության (**29.04.2015թ., կետ III**), ԵՊՀ միջազգային համագործակցության վարչության, մասնաճյուղի արտաքին կապերի բաժնի կանոնադրության (**01.06.2019թ.**), ԵՊՀ ԻՄ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի դրույթների վրա:

Մասնաճյուղի միջազգայնացմանն ուղղված քաղաքականության մշակումն ընթացքի մեջ է: Սակայն արտաքին համագործակցության զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու համար մասնաճյուղն իրականացնում է համապատասխան քայլեր: Մասնաճյուղը կրթական, հետազոտական և գործընկերային պայմանագրեր է կնքում բուհերի, հիմնդրամների, հասարակական և արտադրական կազմակերպությունների հետ՝ նպատակ ունենալով իրականացնել.

- համատեղ ծրագրեր, մասնավորապես օգտագործելով օտարերկրյա բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ Մայր բուհի ունեցած կապերը,
- արդյունավետ և նպատակային պրակտիկաներ, օգտագործելով գործընկեր կազմակերպությունների և ձեռնարկությունների հնարավորությունները,
- դասախոսների, աշխատակիցների և ուսանողների օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացման ծրագրեր, ներգրավելով այլ բուհերի և արտասահմանցի (խաղաղաղության կորպուսի կամավորների) լավագույն կադրերի,
- դասախոսական կազմի և ուսանողների գիտահետազոտական գործունեության աջակցման և խրախուսման գործընթացներ, առանձնահատուկ տեղ տալով միջազգային գիտաժողովներին նրանց մասնակցությանը և միջազգային բարձր վարկանիշ ունեցող ժողովածուներում հոդվածների հրատարակմանը,
- Հայաստանում և այլ երկրներում մասնաճյուղի վերաբերյալ տեղեկատվական նյութերի ստեղծման և տարածման համապատասխան գործընթացներ, անհրաժեշտության դեպքում օգտագործելով նաև Մայր բուհի տեղեկատվական հնարավորությունները:

Այս ուղղությամբ մասնաճյուղի կարևոր և առաջնահերթ քայլերից մեկը 2017թ.-ից մասնաճյուղի

պաշտոնական կայքի եռալեզու տարբերակի գործարկումն էր:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

Մասնաճյուղի արտաքին համագործակցային կապերն ու միջազգայնացման գործընթացներն ապահովում է 2019թ.-ի փետրվարից գործող Արտաքին կապերի բաժինը (ԱԿԲ): Բաժնի հիմնական նպատակն է ապահովել մասնաճյուղի համագործակցությունը այլ ուսումնական հաստատությունների, պետական և ոչ պետական կառույցների և կազմակերպությունների հետ ինչպես ՀՀ-ում, այնպես էլ արտասահմանում՝ կրթական, հետազոտական, հասարակական ու մշակութային գործունեության ոլորտներում:

Բաժնի գործունեությունն իրականացվում է համաձայն մասնաճյուղի կանոնադրության և ԱԿԲ-ի կանոնադրության (**01.06.2019թ.**): Բաժնի աշխատակիցների գործառույթները սահմանված են համապատասխան պաշտոնների անձնագրերում:

Մասնաճյուղն առայժմ գրեթե չունի միջազգային համագործակցության պայմանգրեր, սակայն ունի հնարավորություն օգտվելու Մայր բուհի միջազգային համագործակցության պայմանագրերից և համաձայնագրերից: Ուսումնառության ամբողջ գործընթացն իրականացնելով ԵՊՀ-ի ուսումնական ծրագրերով և հիմնականում ԵՊՀ-ից հրավիրված պրոֆեսորադասախոսական կազմով՝ մասնաճյուղը անուղղակիորեն մասնակցում է ԵՊՀ-ի համապատասխան պայմանագրերով ու համաձայանագրերով նախատեսված գործընթացներին: Մասնաճյուղն այդ առումով պասիվ է:

Իր գործունեության կարճ ժամանակահատվածում մասնաճյուղի արտաքին կապերի բաժինը կնքել է ավելի քան 27 հուշագրեր և պայամանագրեր տեղական և միջազգային հաստատություն-ների, հիմնադրամների, հասարական կազմակերպությունների հետ: Մասնաճյուղը ակտիվ համագործակցում է մարզի ավելի քան 56 արտաքին շահակիցների հետ՝ մարզային և տեղական ինքնակառավարման մարմիններ, զորամաս, դպրոցներ, բանկեր, հասարակական կազմակերպություններ, հիմնադրամներ և այլն:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

Մասնաճյուղի և արտաքին գործընկերների միջև կնված պայմանագրերն ու հուշագրերը նպատակ ունեն համգործակցության շրջանակներում **իրականացնելու** ուսանողների մասնագիտական և անձնային աճին, անգլերեն լեզվով արտահայտվելու կարողությունների զարգացմանն ուղղված դասընթացներ, քննարկումներ (19.10.2019թ., Եվրասիա համագործակ-ցություն հիմնադրամի հյուսիսային մասնաճյուղ), **իրականացնելու** գիտահետազոտական, ուսումնամեթոդական և դաստիարակչական համատեղ գործունեություն (14.05.2019թ., ՌԴ Գժելի պետական համալսարան, **19.10.2019թ., Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան**), համատեղ ջանքերով **նպաստելու** Տավուշի մարզում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտի զարգացմանը (22.02.2019թ., Գյումրու տեղեկա-տվական տեխնոլոգիաների կենտրոն, 07.09.2019թ., “GG” և “Synergi International Systems” ծրագրավորման ընկերություններ), հիմնվելով մասնաճյուղի ուսանողների ներուժի վրա **նրանց վերապատրաստելու** որպես դասընթացավարներ նպաստելու համար աշխատաշուկայում մարզի երիտասարդների մրցունակության բարձրացմանը (30.01.2019թ., ԱյԷյԲի Բիզնեսի միջազգային ակադեմիա) և այլն:

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի հետ համագործակցությունը (**26.06.2018թ.**) ավելի ընդգրկուն նպատակներ ունի. մասնաճյուղն իր տեխնոլոգիապես զինված տարածքներն օգտագործում է մարզի բնակչությանը մասնաճյուղի հետ կապելու համար և նպաստում մարզում անգլերեն լեզվի տարածմանը՝ այդ գործընթացում ներգրավելով նաև ուսանողներին:

«Փրոջեքթ Հարմոնի» հայկական մասնաճյուղի հետ կնքված պայմանագրի (**02.12.2019թ.**) շրջանակներում մասնաճյուղում ստեղծվել է «Ամերիկյան գրադարան և դասընթացի» կենտրոն, որի նպատակն է աջակցել ուսանողների և աշխատակիցների, մարզի բնակիչների օտար լեզվի իմացության զարգացմանը, կազմակերպել կրթական, մշակութային և տեղեկատվական միջոցառումներ, ուսումնական կարճատև դասընթացներ:

Մասնաճյուղի և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի միջև կնքվել է համագործակցության հուշագիր (**07.11.2017թ.**), որի արդյունքում մասնաճյուղում բացվել է Տավուշի տուրիզմի զարգացման և հետազոտության կենտրոն, որի նպատակը գյուղական զբոսաշրջության զարգացումն է, կենտրոնում հաջողությամբ աշխատում են մասնաճյուղի «Սերվիս» և «Զբոսաշրջություն» կրթական ծրագրերի ուսանողները:

2017թ.-ի ապրիլի 2-ին վերակնքվել է մասնաճյուղի և Ֆրանսիայի Վալանս քաղաքի «Մաեստրիս» տեխնոլոգիական համալսարանի միջև փոխհամագործակցության պայմանագիրը, որի շրջանակներում տեղի են ունենում փոխադարձ այցելություններ, իսկ ամեն տարի մասնաճյուղի ուսանողները դասախոսի ուղեկցությամբ այցելում են այդ ուսումնական հաստատություն, մեկ ամիս շարունակ մասնակցում են նրա ուսումնական գործընթացին և զարգացնում ֆրանսերեն լեզվի իմացության մակարդակը (***Հավելված 9, էջ 3***):

2017թ.-ին համագործակցության շրջանակներում ՌԴ Գժելի պետական համալսարանի Կիրառական արվեստի ֆակուլտետի 4 դասախոսներ այցելել են մասնաճյուղ և 7 օր շարունակ վարպետաց դասեր և քննարկումներ իրականացրել մասնաճյուղի կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողների համար: Իսկ 2019թ. փետրվարի 28-ին երկու համալսարանների միջև տեղի է ունեցել գիտագործնական առցանց կոնֆերանս «Զբոսաշրջությունը և մշակույթը երեկ, այսօր և վաղը» թեմայով:

Շատ են նաև ուսանողներին ֆինանսական աջակցության համագործակցային ծրագրերը («Մաշտոց» հիմնադրամ՝ վերջին 3 տարիներին 25-ական ուսանողների 100 հազար դրամի չափով ուսման վարձավճարի փոխհատուցում, Հայ օգնության ֆոնդ՝ 7 ուսանողների Մաթևոսյան կրթավճար ծրագրի շրջանակներում ուսման վճարի ամբողջական փոխհատուցում, ՀՕՖ՝ 14 ուսանողների Հինդլյան կրթավճար ծրագրի շրջանակներում ուսման վճարի մասնակի փոխհատուցում, Իջևանի քաղաքապետարան՝ Իջևան քաղաքի անվանական կրթաթոշակի տրամադրում, Հայաստանի Առաքելական Սուրբ Եկեղցու Տավուշի թեմ՝ հասարակական ակտիվություն ցուցաբերած ուսանողներին 50.000 հազար դրամ պարգևատրում, «Տահույս»-ի կողմից տրամադրվող խրախուսական պարգևավճարներ և այլն):

Ուսանողական պրակտիկան արդյունավետ անցկացնելու և ուսանողների մասնագիտական որակները զարգացնելու համար մասնաճյուղի մինչհամալսարանական կրթության և պրակտիկաների կազմակերպման բաժնի կողմից չորս տասնյակ պայմանագրեր են կնքվել (**էջ 2**) մարզի մի շարք կառույցների, բանկերի, ավագ և հիմնական դպրոցների միջև, իսկ Իջևանի, Նոյեմբերյանի, Դիլիջանի և Բերդի պետական քոլեջների միջև կնքվել է նրանց շրջանավարտների շարունակական կրթության աջակցման պայմանագրեր (***08.07.2015թ., որոշում N752-Ն***):

2017թ.-ից մասնաճյուղն ակտիվ համագործակցում է Դիլիջանի կենտրոնական բանկի

ուսումնագիտական կենտրոնի հետ: Կենտրոնի առաջնակարգ մասնագետները արտաքին համագործակցության շրջանակներում մասնակցում են «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի պարբերական վերանայման և արդյունավետ իրականացման գործընթացին, դասավանդում են մասնաճյուղում, իսկ բարձր առաջադիմությամբ և մրցույթով անցած ուսանողներն իրենց պրակտիկան անց են կացնում կենտրոնում, նրանց տվյալները գրանցվում են կենտրոնի բազայում՝ հետագայում աշխատանքի հրավիրելու համար: Իսկ ահա «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագիրը արտաքին փորձաքննություն է անցել Գյումրու տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնում:

Մասնաճյուղի կողմից կնքված բոլոր հուշագրերը և համագործակցության պայմանագրերը հրապարակվում են մասնաճյուղի պաշտոնական կայքէջի «Փաստաթղթեր» բաժնում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

Մասնաճյուղն իր նախաձեռնությամբ և Մայր Բուհի աջակցությամբ քայլեր է ձեռնարկում բուհի միջազգայնացման գործընթացների արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Այդ նպատակով առաջնահերթություն է տրվում մասնաճյուղի դասախոսների և ուսանողների օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացմանը: Մասնաճյուղում պարբերաբար իրականացվում են գրական, երաժշտական միջոցառումներ, բաց դասեր, օտարալեզու հյուրերի հետ հանդիպումներ, ինտելեկտուալ խաղեր, մրցույթներ, օտար լեզվով գիտաժողովներ և այլն (***Հավելված 9, աղյուսակ 2***): Այդ միջոցառումները հնարավորություն են տալիս ուսանողներին գործնականում դրսևորել լեզվի իմացության իրենց կարողությունները, շփումների ընթացքում կատարելագործել հաղորդակցական ունակությունները: Հարկ է նշել, որ մասնաճյուղի «Անգլերեն լեզու և գրականություն» և «Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրերի ուսանողների լեզվական պատրաստվածության մակարդակի մասին մշտապես վկայել են օտարալեզու հյուրերը: Իրենց հաշվետվություններում այդ մասին են գրել նաև ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահները, լսելով անգլերենով և ֆրանսերենով ավարտական աշխատանքների պաշտպանությունները:

«Կրեդիտային համակարգով դասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի» 2-րդ շրջափուլի իրականացման շրջանակներում 2018-2019թթ. ուստարում կրթական կառուցամասի «Անգլերենը ակադեմիական միջավայրում» մոդուլով վերապատրաստում են անցել 29 դասախոս: Այժմ մասնաճյուղում ընթանում են անգլերենի A2 մակարդակի վերապատրաստման դասընթացները, որին մասնակցում են 12 դասախոս: Իսկ օտար լեզուների ամբիոնի դասախոսները պարբերաբար մասնակցում են տարբեր վերապատ-րաստման դասընթացների (2018թ. մարտի 26-27, «Մանմար» հրատարակչատան կողմից կազմա-կերպված վերապատրաստման դասընթաց): Մասնաճյուղում տեղի են ունեցել **«Առաջնորդություն»** թեմայով երկու դասընթաց՝ անգլերեն լեզվով (***Հավելված 9, աղյուսակ 2, թիվ 14,15***):

Ֆրանկոֆոն պետությունների և կառավարությունների ղեկավարների 17-րդ գագաթնա-ժողովի միջոցառումներին ընդառաջ ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտե-տի ֆրանսիական բանասիրության ամբիոնը կազմակերպել էր «Ֆրանսերենը միջմշակութային հաղորդակցության համտեքստում» թեմայով միջազգային գիտաժողով (**19.04.2018թ.**), որին ակտիվ մասնակցել են նաև մասնաճյուղի դասախոսները: Վերջին տարիներին հաճախակի մասնաճյուղ են այցելում Ֆրանսիայից հյուրեր, որոնք նաև թեմատիկ դասախոսություններ են կարդում ուսանողների համար, կազմակերպում են ֆրանսերեն լեզվով քննարկումներ և այլն (***Հավելված 9, աղյուսակ 2, թիվ 5, 17, 18***):

Յուրաքանչյուր տարի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի հրավերով Խաղաղության Կորպուսի կամավորներն աշխատում են մասնաճյուղում, անց են կացնում դասընթացներ դասախոսական կազմի և ուսանողների համար՝ նրանց անգլերեն լեզվի խոսակցական մակարդակը բարձրացնելու նպատակով:

Հավելված 9-ի աղյուսակ 1-ում ներկայացված է մասնաճյուղի 179 դասավանդողների և 114 աշխատակիցների օտար լեզուներին տիրապետելու վիճակը (տոկոսներով): Ներկայացված թվերը ցույց են տալիս, որ բոլոր **դասախոսները** տիրապետում են ռուսերեն լեզվին, նրանց 62%-ը տարբեր մակարդակով տիրապետում է անգլերեն, իսկ 19%-ը՝ ֆրանսերեն լեզվին: Կարևոր է փաստել, որ դասավանդողների 94%-ը ազատ տիրապետում է ռուսերենին, 18%-ը՝ անգլերենին: **Աշխատակիցների** 87%-ը տիրապետում է ռուսերենին, 29%-ը՝ անգլերենի և 21 %-ը՝ ֆրանսերենի որևէ մակարդակին:

Ուսանողների օտար լեզվի իմացության մակարդակը բարելավվում է կրթական ծրագրերում օտար լեզվի (հիմնականում՝ անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն) պարտադիր դասընթացներով, որոշ կրթական ծրագրերում նաև մասնագիտական անգլերեն և լրացուցիչ օտար լեզվի դասընթացների առկայությամբ:

Օտար լեզվի իմացությանը նպաստում են նաև դասախոսների կողմից ուսանողներին հանձնարարվող օտարալեզու գրականությունների ուսումնասիրությունները: Մասնաճյուղն ունի հագեցած էլեկտրոնային գրադարան, որում առկա են ռուսերեն լեզվով 3482, ֆրանսերեն լեզվով 902 և անգլերեն լեզվով 538 գրքեր: Գրադարանը շարունակում է միջոցներ ձեռք առնել օտար լեզվով գրականության անհրաժեշտ մակարդակ բարելավելու համար:

Ուժեղ կողմեր (Strengths)	Հնարավորություններ (Opportunities)
1. Մասնաճյուղում Արտաքին կապերի բաժնի առկայություն 2. Օտար լեզուներին լավ տիրապետող դասավանդողներ 3. Դասախոսների որակավորման բարձրացման ծրագրի առկայություն 4. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի պաշտոնա-կան եռալեզու էլ. կայքի առկայություն 5. Մասնաճյուղում «Ամերիկյան գրադա-բաններ և ուսուցում» կենտրոնի առկայություն 6. Համագործակցությունների ընդլայնում	1. ԵՊՀ-ի միջազգային կապերի բաժնի տեղա-կան և միջազգային կապերի օգտագործում 2. Այլ ՄՈՒՀ-երի համապատասխան կառույցների հետ համագործակցություն 3. Համագործակցություն ԵՊՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ծրագրերում ընդգրկված դասավանդողների հետ 4. Մասնաճյուղում առկա կենտրոններից օգտվելու, միջոցառումներին մասնակցելու հնարավորություն 5. Պրակտիկաներ՝ տարածաշրջանի գործող ընկերություններում 6. Կայքէջի վերափոխում միջազգային ստանդարտների համապատասխան

Թույլ կողմեր (Weaknesses)	Վտանգներ (Threats)
1. Օտար լեզվով գրականության անհրաժեշտ մակարդակի բացակայություն 2. Մասնաճյուղում վարչական աշխատակիցների համար կազմակերպվող օտար լեզվի դասընթացների բացակայություն 3. Օտար լեզվով դասավանդվող ծրագրերի և դասընթացների բացակայություն 4. Ուսանողների փոխանակման համաձայնագրերի բացակայություն 5. Օտարալեզու PR նյութերի քիչ քանակություն 6. Միջազգային հուշագրերի գրեթե բացակայություն 7. Կայքէջի եռալեզու տարբերակի ոչ լիարժեքություն	1. Տարածաշրջանում աշխարհաքաղաքական իրադրության փոփո-խություններ 2. Ֆինանսական մուտքերի նվազում

Մասնաճյուղի արտաքին կապերի ապահովման գործընթացում մշտապես անհրաժեշտ են բարելավում և զարգացումներ: Մասնաճյուղում նախատեսվում է զարգացնել համալսարանականների օտար լեզվի իմացությունը, հաճախակի կազմակերպել քննարկումներ, հանդիպումներ օտարերկրյա կամավորների, կազմակերպությունների հետ: Մասնավորապես իրականացնել օտար լեզվի դասընթացներ մասնաճյուղի վարչական աշխատակիցների համար:

Ընդլայնել համագործակցության շրջանակները, կնքել ուսանողների փոխանակման համաձայնագրեր, և գրադարանը համալրել օտարալեզու նյութերով և գրքերով: